TYPESCRIPT

ՁԵՌՆԱՐԿ

Հեղինակ՝ Բաղդասարյան Աշոտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2. **Փոփոխականներ (Variables)**
    2.1. Ի՞նչ է փոփոխականը
    2.2. Ի՞նչպես ստեղծել փոփոխական
    2.3. Հաճախ օգտագործվող ֆունցիաներ
    2.4. Console Օբյեկտ
    2.5. Հաղորդագրություններ(Comments)
3. **Տվյալների տեսակները (Data Types)**
    3.1. Տեսակի նշանակությունը
    3.2. Հիմնական տվյալների տեսակները
    3.3. Number տեսակ և հաճախ օգտագործվող մեթոդներ
    3.4. String տեսակ և հաճախ օգտագործվող մեթոդներ
4. **Պայմանական օպերատորներ (Conditional operators)**
    4.1. Ինչ է պայմանը
    4.2. Ինչպես ստեղծել պայման և մեկից ավել պայմաններ
    4.3. Եռակի օպերատոր (Ternary Operator ? :)
    4.4. Switch - Case
    4.5. Ինչ է Boolean-ը
    4.6. Ինչպես են ստացվում boolean արժեքներ
    4.7. Օրինակ առօրյա կյանքից
    4.8. Տրամաբանական օպերատորներ
    4.9. Երբ այլ տիպեր վերածվում են boolean-ի
    4.10. Խնդիրների մեջ կիրառելիություն
5. **Ցիկլեր (Loops)**
    5.1. Ի՞նչ է ցիկլը
    5.2. Ի՞նչ է ալգորիթմը
    5.3. Ի՞նչպես Ստեղծել ցիկլ
    5.4. Օրինակ առօրյա կյանքից
    5.5. խնդիրների մեջ կիրառելիություն
6. **Զանգվածներ (Arrays)**
    6.1. Ի՞նչ է զանգվածը
    6.2. Ի՞նչպես ստեղծել զանգված
    6.3. Զանգվածի արժեքներին հասանելիություն
    6.4. Օրինակ առօրյա կյանքից
    6.5. Պարունակության փոփոխում
    6.6. Խնդիրների մեջ կիրառություն
7. **Գործառույթներ (Functions)**
    7.1. Ի՞նչ է գործառույթը
    7.2. Գործառույթի կառուցվածքը
    7.3. Գործառույթներ արգումնետներով
    7.4. Գործառույթներ վերադարձվող արժեքով
    7.5. Օրինակ առօրյա կյանքից
    7.6. խնդիրների մեջ կիրառություն
8. **Զանգվածների մեթոդներ (Array Methods)**
    8.1. Push(), ավելացնել տարր վերջում
    8.2. Pop(), հեռացնել վերջին տարրը
    8.3. Shift() և unshift()

8.4. ForEach(), աշխատել բոլոր տարրերի հետ
8.5. Map(), փոխել զանգվածը նորով
8.6. Filter(), զտել տարրերը
8.7. Find(), գտնել առաջին համապատասխան տարրը

9. Օբյեկտներ (Objects)
9.1. Ի՞նչ է օբյեկտը
9.2. Օբյեկտի ստեղծում
9.3. Տվյալների հասանելիություն
9.4. Օբյեկտի հատկությունների փոփոխում
9.5. Օրինակ առօրյա կյանքից
9.6. Օբյեկտների ներքին օբյեկտներ
9.7. Խնդիրների մեջ կիրառելիություն

10. Template Literals
10.1. Ի՞նչ է Template Literals-ը
10.2. Օրինակ առօրյա կյանքից

11. Falsy և Truthy արժեքներ
11.1. Ի՞նչ է Falsy արժեք
11.2. Ի՞նչ է Truthy արժեք

12. Typeof օպերատոր
12.1. Ի՞նչպես օգտագործել typeof օպերատորը
12.2. Null և undefined տեսակի արժեքներ
12.3. Օրինակ առօրյա կյանքից

13. Math Object
13.1. Math-ի օգտակար մեթոդներ
13.2. Կիրառություն խնդիրների մեջ

14. JSON (JavaScript Object Notation)
14.1. Ինչպիսին է JSON-ը
14.2. JSON մեթոդներ

15. Սխալներ և սխալների կառավարում
15.1. Error-ների հիմնական տեսակներ
15.2. Ի՞նչպես կանխել սխալները(try,catch)
15.3. Ի՞նչպես ստեղծել մեր սեփական Error օբյեկտը

16. ISNaN ֆունկցիա
16.1. Ի՞նչ է NaN-ը
16.2. Ինչ է անում isNaN-ը

17. Continue/Break
17.1. Ի՞նչ է continue հրամանը
17.2. Ի՞նչ է անում continue հրամանը
17.3. Ինչ է break հրամանը
17.4. Ի՞նչ է անում break հրամանը
17.5. Կիրառելիություն խնդիրների մեջ

18. Arrow Functions

19. Generator Functions

20. Scope
20.1. Ինչ է scope-ը
20.2. Արտահայտությունների և հրամանների վերջ

Մաս 1 - Նախաբան

Հակիրճ նկարագրություն

Այս գիրքը նախատեսված է սկսնակներից մինչև փորձառու ծրագրավորողների համար, ովքեր ցանկանում են խորությամբ սովորել TypeScript: Այն ընդգրկում է լեզվի հիմնական հասկացությունները, տիպային համակարգը, օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման (OOP - Object-Oriented Programming) հնարավորությունները, JavaScript-ի հետ համատեղելիությունը, ինչպես նաև գործնական օրինակներ:

Ինչ կսովորեք այս գրքից

- TypeScript-ի հիմունքները
- Տիպեր, ինտերֆեյսներ, կլասներ և ժառանգում
- Տիպային համակարգի ուժեղ կողմերը
- JavaScript-ի և TypeScript-ի տարբերությունները
- Օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորում
- Լավագույն պրակտիկաներ և օպտիմալ կոդի կառուցում

Ինչու սովորել TypeScript

Վերջին տարիներին TypeScript-ը դարձել է JavaScript-ի ամենահզոր գործիքներից մեկը: Այն ստեղծվել է Microsoft-ի կողմից՝ որպես JavaScript-ի սուպերսեթ, որը ավելացնում է ստատիկ տիպավորում և այլ հնարավորություններ որոնք չկան JavaScript ում:

Ստատիկ տիպավորումը թույլ է տալիս ծրագրավորողին դեռ կոդ գրելու ժամանակ կանխել սխալներ՝ նշելով, թե տվյալ փոփոխականը կամ ֆունկցիան ինչ տիպի տվյալներ պետք է ունենա:

Սկզբում թվում էր, թե TypeScript-ը պարզապես լրացում է JavaScript-ի համար, բայց այսօր այն լայնորեն օգտագործվում է արտադրության մակարդակով՝ սկսած վեբ հավելվածներից մինչև սերվերային համակարգեր:

TypeScript-ը օգնում է ստեղծել ավելի մեծ ու կայուն ծրագրեր՝ իր տիպային համակարգի շնորհիվ: Այն հիանալի է հատկապես մեծ թիմային նախագծերի համար, որտեղ բոլոր անդամները կարող են վստահ լինել, որ տվյալները փոխանցվում են ճիշտ և կանխատեսելի ձևով:

Ում համար է այս գիրքը նախատեսված

Այս գիրքը նախատեսված է նրանց համար, ովքեր.

- Ցանկանում են սովորել TypeScript՝ հիմքերից մինչև բարդ թեմաներ
- Արդեն օգտագործում են TypeScript և ուզում են բարձրացնել իրենց հմտությունները և ձեռք բերել ավելի շատ փորձ:

Եթե դուք սկսնակ եք, բայց արդեն ծանոթ եք HTML-ին և CSS-ին, ապա այս գիրքը կօգնի ձեզ վստահորեն առաջ շարժվել՝ սկսելով պարզ օրինակներից մինչև իրական նախագծեր:

Ինչ պետք է իմանալ առաջ անցնելիս

TypeScript-ը կառուցված է JavaScript-ի հիման վրա:
Ուստի եթե ունեք JavaScript-ի մասին գիտելիքներ, TypeScript-ը սովորելը շատ ավելի հեշտ կլինի:

Եթե դեռ չգիտեք JavaScript, անհանգստանալու կարիք չկա: Այս գիրքը ներկայացնում է համառոտ համեմատություններ և պարզ օրինակներ, որոնք կօգնեն նույնիսկ սկսնակներին հեշտությամբ ընկալել և օգտագործել TypeScript-ը:

Ի՞նչ գործիքներ ենք օգտագործելու գրքում

- Տեքստային խմբագրիչ, մենք օգտագործելու ենք Visual Studio Code
- Node.js և npm՝ TypeScript-ը տեղադրելու և գործարկելու համար
- Command Prompt՝ հրամաններ աշխատեցնելու համար

Ինչպես օգտվել այս գրքից առավել արդյունավետ

- Սկսեք կարդալ հերթականությամբ, առանց հատվածներ բաց թողնելու
- Փորձեք գրել ձեր սեփական օրինակները ամեն նոր գաղափար սովորելուց հետո
- Եթե ինչ-որ բան անհասկանալի է, կարդացեք այնքան մինչև ամբողջական հասկանաք նյութը և նոր առաջ անցեք:

Մաս 2 - Ծանոթություն

Ի՞նչ է TypeScript-ը

TypeScript-ը ծրագրավորման լեզու է, որը ընդլայնում է JavaScript-ը՝ ավելացնելով ստատիկ տիպավորում:
Սա նշանակում է, որ կարող եք նախապես նշել փոփոխականների, ֆունկցիաների և օբյեկտների տիպերը և ստանալ սխալների մասին ահազանգեր դեռևս գրելու փուլում, մինչև ծրագիրը աշխատեցնելը:

Ստատիկ տիպավորում նշանակում է, որ տվյալների տիպերը որոշվում և ստուգվում են կոդ գրելու պահին, ոչ թե ծրագրի աշխատելու ընթացքում: Սա հակառակն է դինամիկ տիպավորման, ինչպիսին է JavaScript-ը:

TypeScript կոդը պահվում է `.ts` ֆայլերում և կոմպիլացվում (թարգմանվում) է սովորական `.js` ֆայլերի, որպեսզի կարողանա աշխատել ցանկացած բրաուզերում կամ JavaScript միջավայրում:

Օրինակ. (փոքրիկ գործնական օրինակ ավելացնենք)

```
let message: string = "Բարև աշխարհ"; // Ստեղծում ենք փոփոխական message անունով որին վերագրում ենք "Բարև աշխարհ"
console.log(message); // Տպում ենք արդյունքը՝ "Բարև աշխարհ"
```

Այստեղ մենք նշում ենք, որ `message` փոփոխականը պետք է լինի տիպով `string`:
Եթե փորձենք նրան այլ տիպի արժեք նշանակել (օրինակ՝ թիվ), կստանանք սխալ՝ դեռ կոդ գրելու պահին:

Փոփոխականներ TypeScript-ում

TypeScript-ում, ինչպես JavaScript-ում, փոփոխականները օգտագործվում են տվյալներ պահելու համար: Սակայն TypeScript-ը հնարավորություն է տալիս փոփոխականների տիպը բացահայտորեն նշել, ինչը օգնում է կանխել տիպային սխալները կոդ գրելու ընթացքում:
Հետագա բաժիններում մենք ավելի մանրամասն կծանոթանանք փոփոխականների տիպերին և դրանց հայտարարության տարբեր եղանակներին:

Ինչու է TypeScript-ը կարևոր

✅ Օգնում է կանխել շատ սխալներ՝ դեռ կոդ գրելու փուլում

✅ Ուժեղ տիպային համակարգ, որն ապահովում է կոդի հստակություն և կանխատեսելիություն

✅ Ավելի լավ IntelliSense և ավտոմատ լրացում ծրագրավորման միջավայրերում (IDE-ներում)

✅ Աջակցում է օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման (OOP) գաղափարներ՝ կլասներ, ժառանգում, ինտերֆեյսներ *(Ստանդարտ JavaScript-ում կլասներն ու ժառանգումը ավելի թույլ էին, իսկ TypeScript-ը դրանք դարձնում է ավելի հզոր և մոտեցնում դասական OOP լեզուներին՝ ինչպիսիք են Java-ն և C#-ը:)*

✅ Հիանալի է մեծ թիմերում և մասշտաբային նախագծերում օգտագործելու համար *(TypeScript-ը թույլ է տալիս, որ տարբեր ծրագրավորողներ արագ հասկանան միմյանց կոդը և նվազեցնեն թյուրըմբռնումները, ինչը շատ կարևոր է թիմային աշխատանքում)*:

✅ Հեշտությամբ ինտեգրվում է բոլոր հայտնի JavaScript գրադարանների և գործիքների հետ

Տարբերություններ JavaScript-ի և TypeScript-ի միջև

1. Տիպային համակարգ

- **JavaScript**-ում փոփոխականների տիպերը սահմանված չեն: Կարող ես փոփոխականի մեջ ցանկացած տիպի արժեք գրել (թիվ, տեքստ, օբյեկտ և այլն), և սխալը կտեսնես միայն ծրագրի աշխատանքի ընթացքում:

- **TypeScript**-ում կարող ես նախապես հայտարարել փոփոխականի տիպը (օրինակ՝ `string`, `number`, `boolean`): Սա օգնում է վաղ հայտնաբերել սխալները՝ դեռ կոդ գրելու փուլում:

Օրինակն իրականացնենք երկու լեզուներով՝ JavaScript-ով և TypeScript-ով, որպեսզի տարբերությունները լինեն ավելի տեսանելի:

JavaScript-ում՝
Տվյալ դեպքում մեր կոդը կաշխատի առանց սխալի: Երկրորդ տողում փոփոխականին կտրամադրվի նոր արժեք՝ 5, նույնիսկ եթե սկզբում այն տեքստային արժեք էր ստացել: JavaScript-ը թույլ է տալիս փոփոխականների տիպը փոխել կատարողականի ընթացքում՝ առանց զգուշացումների կամ սխալների:

📜 **Նշում**. JavaScript-ը թույլ տիպավորված լեզու է, այսինքն՝ փոփոխականների տիպերը կարող են փոխվել ծրագրի աշխատանքային ընթացքում:

```
let name = "Աննա";
name = 5;
```

TypeScript-ում՝
Տվյալ դեպքում մեր կոդը չի աշխատի: Քանի որ փոփոխականը հայտարարված է որպես տիպ `string`, TypeScript-ը թույլ չի տա հետագայում նրան վերագրել թիվ: Սա կբերի սխալի դեռ կոդ գրելու պահին՝ ապահովելով կոդի ավելի բարձր հուսալիություն:

📜 **Նշում**. TypeScript-ը խիստ տիպավորված լեզու է, որտեղ փոփոխականների, ֆունկցիաների և օբյեկտների տիպերը հստակ սահմանված են և պահպանվում են ամբողջ ծրագրում:

```
let FirstName: string = "Anna";
FirstName = 8;
```

2. Նոր հնարավորություններ

JavaScript ծրագրավորման լեզվում ստանդարտորեն չկան որոշ առաջադեմ հնարավորություններ, ինչպիսիք են ինտերֆեյսները, էնյումերացիաները, ջեներիկները և կատարելագործված մոդուլային կառուցվածքը:

TypeScript-ը լրացնում է այս բացը՝ առաջարկելով. Տիպերի հայտարարում, Ինթերֆեյսներ (Interface), Էնյումերացիաներ (Enum), Ջեներիկներ (Generics), Մոդուլային կառուցվածքի կատարելագործում:

Ավելին, TypeScript-ը նաև ապահովում է ամբողջական օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման (OOP) գործիքակազմ՝ ներառյալ կլասներ, ժառանգում և ինկապսուլյացիա:

3. Կոդի կատարում

JavaScript կոդը կարող է անմիջապես աշխատել բրաուզերում (օրինակ՝ Chrome, Firefox) կամ հատուկ ծրագրերում, ինչպիսին է Node.js-ը: Այսինքն՝ JavaScript ֆայլերը բացելով՝ դրանք միանգամից գործարկվում են:

Իսկ TypeScript կոդը չի կարող անմիջապես աշխատել: Նախ պետք է այն հատուկ ծրագրի միջոցով փոխել (կոմպիլացնել) սովորական JavaScript-ի: Այս փուլում `.ts` (TypeScript ֆայլ) փոխարկվում է `.js` (JavaScript ֆայլ):

Կոմպիլացիա - կոդի փոխակերպում մեկ լեզվից մյուսի՝ մեքենայի կամ համակարգչի կողմից ընկալելի լինելու համար: Այս գործընթացը անհրաժեշտ է, որ TypeScript-ը հասկանալի լինի JavaScript-ի տեսքով:

Node.js-ը JavaScript-ի համար հատուկ ծրագիր է, որը թույլ է տալիս գրել և աշխատեցնել JavaScript կոդը ոչ միայն ինտերնետային էջերում, այլ նաև համակարգչում: Node.js-ը շատ արդյունավետ է, քանի որ աշխատում է արագ և կարող է միաժամանակ շատ առաջադրանքներ կատարել: Այն հիմնականում օգտագործվում է վեբ հավելվածներ ստեղծելու և տվյալներ արագ մշակելու համար:

4. Սխալների հայտնաբերում

JavaScript-ում կոդը աշխատելու ընթացքում կարող են սխալներ առաջանալ, և դրանք հաճախ երևում են միայն ծրագրի աշխատանքին ժամանակ:

Իսկ TypeScript-ը կոդ գրելու պահին արդեն ստուգում է, արդյոք ամեն ինչ ճիշտ է արված: Այսպես՝ շատ սխալներ կարելի է նկատել ու շտկել դեռ կոդ գրելու ընթացքում:

Սխալների ստուգում կոդ գրելու ընթացքում նշանակում է, որ համակարգը օգնում է քեզ ավելի արագ գտնել խնդիրները, նախքան ծրագիրը կաշխատի:

5. Օգտագործման նպատակը

JavaScript-ը հարմար է, երբ ուզում ես արագ ստեղծել փոքր կամ միջին չափի նախագծեր: Այն տալիս է ազատություն, բայց նաև պետք է զգույշ լինել, քանի որ շատ բաներ համակարգը չի ստուգում:

TypeScript-ը ավելի հարմար է, երբ նախագիծը մեծ է, կամ երբ շատ մարդիկ են աշխատում միասին: Այն օգնում է, որ կոդը լինի հստակ, ճիշտ դասավորված և ավելի կանխատեսելի:

6. Սովորելու ընթացքը

Եթե արդեն գիտես JavaScript, ապա TypeScript սովորելն ավելի հեշտ կլինի, քանի որ այն շատ նման է, պարզապես ունի լրացուցիչ հնարավորություններ:

Եթե նոր ես սկսում ծրագրավորումը, խորհուրդ է տրվում նախ լավ հասկանալ JavaScript-ը, հետո անցնել TypeScript-ին: Այսպես կկարողանաս ավելի լավ հասկանալ՝ ինչ առավելություններ է տալիս TypeScript-ը:

TypeScript-ի տեղադրում (Windows և Linux)

TypeScript-ի օգտագործման համար նախ պետք է տեղադրեք Node.js, որը թույլ է տալիս աշխատեցնել JavaScript և TypeScript համակարգչում: Եթե արդեն տեղադրված է Node.js, կարող եք անմիջապես անցնել TypeScript-ի տեղադրման քայլերին:

1. Node.js-ի տեղադրում

Քայլ 1. Բացեք ձեր բրաուզերը և գնացեք Node.js-ի պաշտոնական կայք: Ներբեռնեք վերջին LTS (Long Term Support) տարբերակը:

Քայլ 2. Տեղադրեք ծրագրի ներբեռնված ֆայլը՝ հետևելով էկրանին ցուցադրվող հրահանգներին: Հետևաբար, համակարգում տեղադրվելու են Node.js և npm (Node Package Manager), որոնք անհրաժեշտ են TypeScript-ի տեղադրման համար:

2. TypeScript-ի տեղադրում

Windows-ի համար

Քայլ 1. Windows համակարգում բացեք CMD (Command Prompt) ծրագիրը և մուտքագրեք հետևյալ հրամանը՝

```
npm install -g typescript
```

Այս հրամանը կտեղադրի TypeScript-ը համակարգում:

Քայլ 2. Տեղադրման ավարտից հետո TypeScript-ի կոմպայլերը (tsc հրամանը) հասանելի կլինի համակարգում:

Linux-ի համար

Քայլ 1. Linux-ում բացեք թերմինալ և մուտքագրեք հետևյալ հրամանը՝

```
sudo npm install -g typescript
```

Նախքան տեղադրումը դուք կարող եք անհրաժեշտ լինել ստանալ ձեր համակարգի ադմինիստրատորի իրավունքները՝ մուտքագրելով ձեր գաղտնաբառը:

Քայլ 2. Տեղադրման ավարտից հետո TypeScript-ի կոմպայլերը (tsc հրամանը) հասանելի կլինի համակարգում:

3. TypeScript-ի տեղադրման ստուգում

Քայլ 1. Ստուգելու համար, արդյոք TypeScript-ը ճիշտ տեղադրված է, բացեք CMD (Windows) կամ Թերմինալ (Linux) և մուտքագրեք հետևյալ հրամանը՝

```
tsc --version
```

Եթե TypeScript-ը ճիշտ տեղադրվել է, պետք է տեսնեք նրա տարբերակը, օրինակ՝ Version 4.x.x:

Ստեղծել TypeScript պրոյեկտ

Որպեսզի ստեղծեք TypeScript-ի պրոյեկտ և սկսեք աշխատել ձեր կոդի վրա, պետք է հետևեք որոշ պարզ քայլերի: Այս բաժնում մանրամասն կներկայացնեմ, թե ինչպես պետք է ստեղծեք ֆայլեր, կոնֆիգուրացիա և կառուցեք TypeScript պրոյեկտ՝ օգտագործելով Node.js:

1. Պանակ(Folder) ստեղծելը

Քայլ 1. Նախ պետք է ստեղծեք նոր պանակ(folder), որտեղ կպահեք ձեր TypeScript պրոյեկտը:

Բացեք Terminal-ը կամ Command Prompt-ը (Windows-ի համար) և կատարեք հետևյալ հրամանը՝

```
mkdir my-typescript-project
cd my-typescript-project
```

Այս հրամանների միջոցով դուք կստեղծեք պանակ որին անվանում ենք my-typescript-project, կարող է լինել այլ անվանում, և երկրորդ հրամանի միջոցով մուտք եք գործում ձեր ստեղծած պանակի մեջ:

2. package.json ֆայլի ստեղծում

Ստեղծեք package.json ֆայլը՝ օգտագործելով npm-ի ինտեգրված հրամանը: package.json ֆայլը կարևոր է պրոյեկտի կարգաբերման համար և պարունակում է այնպիսի տվյալներ, ինչպիսիք են՝ պրոյեկտի կոնֆիգուրացիաները և օգտագործվող գրադարանների մասին տեղեկությունները:

Մուտքագրեք հետևյալ հրամանը.

```
npm init -y
```

Այս հրամանը ավտոմատ կերպով կստեղծի package.json ֆայլը ձեր պրոյեկտի մեջ՝ բոլոր անհրաժեշտ մուտքագրումներով:

3. TypeScript-ի կոնֆիգուրացիոն ֆայլի ստեղծում

Քայլ 3. Ստեղծեք tsconfig.json ֆայլը՝ TypeScript-ի կոնֆիգուրացիայի համար: Այս ֆայլը թույլ կտա վերահսկել TypeScript կոմպիլյացիան՝ նշելով, թե ինչքան թարմացում է պետք անել և որտեղ պետք է պահվեն կոմպիլացված JavaScript ֆայլերը:

Ստեղծեք tsconfig.json ֆայլը՝ մուտքագրելով հետևյալ հրամանը՝

```
tsc --init
```

Այս հրամանը կստեղծի tsconfig.json ֆայլը, որտեղ կկարողանաք փոփոխություններ կատարել, եթե անհրաժեշտ է:

4. TypeScript ֆայլի ստեղծում

Քայլ 4. Ստեղծեք ձեր առաջին TypeScript ֆայլը: Օրինակ՝ app.ts անունով ֆայլ, որտեղ կգրեք TypeScript կոդը:

Նոր ֆայլ ստեղծելու համար բացեք տեքստային խմբագրիչ (օրինակ՝ Visual Studio Code) և ստեղծեք app.ts ֆայլը կամ ձեր նախնտրած անվանումով .ts ֆայլ:

Կոդի օրինակ՝

```
let word: string = "Hello, TypeScript!"; // Ստեղծում ենք
փոփոխական string տեսակի որին վերագրում ենք Hello, TypeScript!
console.log(word); // Տպում ենք արդյունքը՝ Hello, TypeScript!
```

Տեքստային խմբագրիչը ծրագիր է, որով կարող ենք ստեղծել և փոփոխել տեքստային ֆայլեր: Այն հիմնականում օգտագործվում է ծրագրավորողների կողմից կոդ գրելու, պահպանելու և խմբագրելու համար: Օրինակներ են Visual Studio Code-ը, Sublime Text-ը և Notepad++-ը:

5. Կոդի կոմպիլացիա

Քայլ 5. Երբ TypeScript կոդը պատրաստ է, անհրաժեշտ է այն կոմպիլացնել JavaScript ֆայլի: Սա անելու համար կատարեք հետևյալ հրամանը թերմինալում՝ `tsc`

Այս հրամանը կկոմպիլացնի ձեր app.ts ֆայլը և ստեղծի app.js ֆայլը: Կոմպիլացիայի ընթացքում օգտագործվում է tsconfig.json ֆայլի կարգաբերման տվյալները:

Երբ .ts ֆայլը կոմպիլացվի .js ֆայլի, դուք .js ֆայլում կնկատեք հենց ֆայլի սկզբում գրված "use strict":

"use strict" որոշում է JavaScript-ի խստացված ռեժիմը (strict mode), որը նպատակ ունի անվտանգ դարձնել կոդը և բացահայտել հնարավոր սխալներ, որոնք սովորաբար թաքնվում են սովորական ռեժիմում:

6. Պրոյեկտի վերլուծություն և Node.js-ի միջոցով կատարում

Քայլ 6. Պարզապես օգտագործեք Node.js համակարգը՝ app.js ֆայլը կատարելու համար: Դա անել՝ օգտագործեք այս հրամանը թերմինալում՝

```
node app.js
```

Եթե ամեն ինչ ճիշտ է արված, պետք է տեսնեք հետևյալ արժեքը.

```
Hello, TypeScript!
```

7. Պրոյեկտի արտաքին ռեսուրսների և գրադարանների կառավարում

Քայլ 7. Եթե ձեր TypeScript պրոյեկտը պահանջում է այլ գործիքներ կամ հավելյալ հնարավորություններ, կարող եք դրանք ավելացնել npm-ի միջոցով: Օրինակ, եթե ցանկանում եք տեղադրել որոշակի գրադարան, օգտագործեք հետևյալ հրամանը.

```
npm install <library-name>
```

Այսպես, անհրաժեշտ ռեսուրսները կհայտնվեն `node_modules` պանակում: Ավելին, այդ ռեսուրսները կտեղադրվեն նաև `package.json` ֆայլում՝ դառնալով ձեր պրոյեկտի մասը:

Գրադարանն այնպիսի հավաքածու է, որը պարունակում է նախապես գրած կոդեր և գործիքներ, որոնք կարող են օգնել ծրագրավորողներին ավելի արագ կատարել որոշակի առաջադրանքներ:

Օրինակ, JavaScript-ի `sort()` ֆունկցիան կազմում է զանգվածի (array) տարրերը որոշակի կարգով: Այն կարող է օգտագործվել ցանկացած ժամանակ, երբ ցանկանում ենք դասավորել թվերը կամ տեքստերը աճման կամ նվազման կարգով:

Մաս 3 - Լեզվի հիմունքները

TypeScript լեզվի պատմություն

TypeScript-ը ստեղծվել է որպես լուծում այն խնդիրների, որոնք առաջացել էին JavaScript-ի ավելի լայն կիրառման պայմաններ ում: Երբ 2010-ականների սկզբին JavaScript-ը սկսեց օգտագործվել ոչ միայն պարզ ինտերակտիվության, այլ նաև բարդ ու խոշոր ծրագրերի ստեղծման համար, երևացին նրա սահմանափակումները՝ հատկապես տիպայնության բացակայությունն ու սխալների ուշ բացահայտումը: Այս պայմաններում Microsoft-ը սկսեց մշակել մի նոր լեզու, որը կհիմնվի JavaScript-ի վրա, բայց կլրացնի դրա թույլ կողմերը՝ ապահովելով ավելի կանխատեսելի և կառավարվող կոդ:

2012 թվականի հոկտեմբերին Microsoft-ը թողարկեց TypeScript 0.8 տարբերակը՝ ներկայացնելով այն որպես բաց կոդով ծրագրավորման լեզու: Այն նախագծվել էր որպես JavaScript-ի վերին շերտ, այսինքն՝ ցանկացած վավեր JavaScript կոդ նաև վավեր TypeScript է, ինչը նշանակում է, որ ծրագրավորողները կարող էին հեշտությամբ անցում կատարել նոր լեզվին՝ չվնասելով գործող նախագծերը:

TypeScript-ը սկզբնական շրջանում ընդունվեց համեմատաբար սահմանափակ շրջանակներում, սակայն նրա աճն արագացավ, երբ 2014-2016 թվականներին Angular ֆրեյմվորթի թիմը հայտարարեց, որ Angular 2-ը ամբողջությամբ գրվելու է TypeScript-ով: Այս քայլը ոչ միայն բարձրացրեց լեզվի հեղինակությունը, այլև խթանեց նրա կիրառումը լայն ծրագրավորման համայնքում: Հետագա տարիներին՝ 2016-ից սկսած, TypeScript-ը ստացավ մի շարք բարելավումներ, ինչպիսիք են մոդուլների աջակցությունը, async/await ֆունկցիոնալությունը և խստացված տիպային ստուգումները, որոնք էլ ավելի հզորացրին լեզուն:

2020-ից սկսած TypeScript-ը արդեն դիտվում էր որպես առաջատար լուծում՝ JavaScript-ի մեծ նախագծերում օգտագործելու համար: Այն լիովին ինտեգրվեց ժամանակակից գործիքակազմի և ֆրեյմվորթների մեջ՝ ներառյալ VS Code խմբագրիչը, React և NestJS գրադարանները: Այսօր TypeScript-ը դարձել է շատ ծրագրավորողների նախընտրելի լեզուն՝ շնորհիվ իր կանխատեսելիության, լավ IDE աջակցման և մեծ նախագծերի կառավարման հարմարությունների:

Այսօր TypeScript լեզուն օգտագործվում է բազմաթիվ հայտնի ծրագրերում, որոնք մարդիկ օգտագործում են ամեն օր: Օրինակ՝ Microsoft-ը հենց այս լեզվով է գրել իր հայտնի կոդ գրելու ծրագիրը՝ Visual Studio Code-ը: Նույնը արել են նաև Google-ը, երբ ստեղծել է Angular անունով գործիքը, որի օգնությամբ պատրաստում են կայքեր: TypeScript են օգտագործում նաև մեծ ընկերություններ, ինչպես օրինակ Slack-ը, GitHub-ը, Airbnb-ն և շատ ուրիշներ:

Փոփոխականներ

Ի՞նչ է փոփոխականը

Ծրագրավորման մեջ փոփոխականը նման է մի փոքրիկ տուփի, որի մեջ մենք պահում ենք ինչ-որ արժեք: Այդ արժեքը կարող է լինել թիվ, տեքստ կամ որևէ այլ բան: Ամեն անգամ, երբ մենք ուզում ենք ծրագրում ինչ-որ բան պահել և հետո օգտագործել՝ դրա համար ստեղծում ենք փոփոխական:

Պատկերացրու մի պահարան՝ բազմաթիվ դարակներով: Յուրաքանչյուր դարակ ունի իր անունը, և դու այնտեղ կարող ես դնել տվյալ: Հետո, երբ քեզ պետք է տվյալը, պարզապես ասում ես դարակի անունը, ու տվյալը ստանում ես: Սա է փոփոխականի հիմնական գաղափարը:

Ի՞նչպես ստեղծել փոփոխական TypeScript ում

TypeScript-ում (ինչպես JavaScript-ում) փոփոխական ստեղծելու համար օգտագործում ենք հետևյալ հրամանները let, const, var

Օրինակ `

`let` – երբ արժեքը կարող է փոխվել.

```
let age : Number = 17; // Ստեղծում ենք փոփոխական 'age' անունով և վերագրում ենք նրան 17 արժեքը, նշելով որ իր արժեքը թիվ է
age = 18; // Փոփոխում ենք 'age' փոփոխականի արժեքը՝ դարձնելով 18
console.log(age); // Տպում ենք արդյունքը՝ 18
```

let-ով ստեղծված փոփոխականը կարող է փոխվել հետո: Այս դեպքում մենք սկզբում տալիս ենք 17, հետո փոխում ենք 18-ով:

`const` – երբ արժեքը հաստատուն է և չի փոխվելու.

```
const year = 2007; // Ստեղծում ենք 'year' անունով փոփոխական, որը հաստատուն է՝ արժեքը 2007
// year = 2008  Սա սխալ է, որովհետև const փոփոխականի արժեքը հնարավոր չէ փոխել
console.log(year); // Տպում ենք արդյունքը՝ 2007
```

Եթե վստահ ենք, որ որևէ արժեք ծրագրի ընթացքում պետք է մնա անփոփոխ, ապա պետք է օգտագործենք const հրամանը:

Սա ոչ միայն ցույց է տալիս, որ արժեքը հաստատուն է, այլ նաև պաշտպանում է տվյալը պատահական կամ չնախատեսված փոփոխությունից, Օրինակ՝ մարդու ծննդյան տարեթիվը կայուն տվյալ է, քանի որ այն միանշանակ է և ծրագրի ընթացքում չի կարող փոխվել:

`var` – նախընտրելի չէ օգտագործել՝ ունի հնացած վարք

```
var name : String = "Աշոտ"; // Ստեղծում ենք 'name' փոփոխականը 'Աշոտ' արժեքով՝ օգտագործելով հնացած 'var'
name= "Արամ"; // Փոփոխում ենք փոփոխականի արժեքը
console.log(name); // Տպում ենք արդյունքը՝ Արամ
```

Չնայած `var`-ը թույլ է տալիս փոփոխել փոփոխականի արժեքը, այն ունի հնացած վարք: Մասնավորապես՝ այն չի պահպանում բլոկի սահմանները, ինչը կարող է հանգեցնել սխալների: Այս հասկացությունը՝ «բլոկային սահմաններ», մենք կքննարկենք առաջիկա գլուխներում:

Հետևաբար, փոփոխականներ ստեղծելու համար այսուհետ կօգտագործենք միայն let և const հրամանները՝ որպես ժամանակակից և անվտանգ տարբերակներ:

alert, prompt, console

Ծրագրեր ստեղծելիս երբեմն ցանկանում ենք օգտատիրոջը ցույց տալ հաղորդագրություն կամ հարցնել ինչ որ բան: TypeScript-ը, ինչպես JavaScript-ը, տրամադրում է երկու հիմնական ֆունկցիա, որոնք մեզ օգնում են այդ գործում, alert(), prompt() :

Այս երկու ֆունկցիաները պատկանում են բրաուզերի հիմնական օբյեկտին՝ window-ին: Այդ պատճառով էլ մենք կարող ենք օգտագործել դրանք առանց որևէ գրադարան ներմուծելու:

> Նշում
> Այս ֆունկցիաները հասանելի են միայն բրաուզերում, որովհետև միայն բրաուզերը ունի «պատուհանի» միջավայր (window), որտեղ հնարավոր է ցուցադրել հաղորդագրություններ:
> Եթե աշխատում եք սերվերային միջավայրում՝ օրինակ Node.js-ում, ապա այդ ֆունկցիաները չեն աշխատի:

`alert()` ֆունկցիան օգտագործվում է՝ օգտատիրոջը պարզ տեղեկություն ցուցադրելու համար. Օրինակ՝ alert("Բարև աշխարհ"):

Եթե ուզում ենք օգտատիրոջից վերցնել արժեք (օրինակ՝ անունը), կարող ենք օգտագործել prompt():

```
let name = prompt("Ի՞նչ է քո անունը:"); // Ստեղծում ենք փոփոխական
```

```
name անունով որին վերագրում ենք prompt ֆունկցիան որը օգտատերից
հարցնում է "Ի՞նչ է քո անունը:"
alert(name); // Այստեղ արդյունքը կախված է օգտատերի պատասխանից
```

Այստեղ առաջին տողում մենք ստեղծում ենք name անունով փոփոխական և նրան վերագրում ենք prompt() ֆունկցիայի վերադարձած արժեքը: Այս ֆունկցիան բացում է մի պատուհան՝ օգտատիրոջից ստանալու համար անունը: Օգտատերը մուտքագրում է իր անունը, և այդ արժեքը պահվում է name փոփոխականի մեջ:

Երկրորդ տողում օգտագործում ենք alert() ֆունկցիան՝ ստացված անունը ցուցադրելու համար: Այսպիսով, օգտատերը տեսնում է իր մուտքագրած անունը՝ հաղորդագրության պատուհանում:

Node.js-ում տպելու համար սովորաբար օգտագործվում է `console.log()` ֆունկցիան, որը տպում է տվյալը կոնսոլում:

Իսկ ի՞նչ է իրականում console.log()-ը:

console սա JavaScript-ի կողմից տրամադրված ներկառուցված օբյեկտ է, որը նախատեսված է տերմինալում կամ բրաուզերի կոնսոլում տարբեր տեղեկություններ ցուցադրելու համար: Այս օբյեկտը պարունակում է մի շարք մեթոդներ, որոնց միջոցով կարող ենք տպել տարբեր տվյալներ, ստանալ սխալներ, զգուշացումներ և այլն: log() սա console օբյեկտի մեթոդներից (ֆունկցիաներից) մեկն է: Այն բառացի նշանակում է՝ "գրանցել", այսինքն՝ ինչ-որ տվյալ ուղարկել և ցույց տալ կոնսոլում: Երբ գրում ենք console.log(...), մենք ասում ենք՝ "դա գրի կոնսոլում":

Այսպիսով, ամբողջ console.log("Բարև աշխարհ") արտահայտությունը նշանակում է. Տպի "Բարև աշխարհ" տերմինալում:

Բացի log() մեթոդից, console օբյեկտը ունի նաև այլ օգտակար մեթոդներ.

- ➢ console.error() – Տպում է սխալ հաղորդագրություն:
- ➢ console.warn() – Տպում է զգուշացում:
- ➢ console.info() – Տպում է ինֆորմացիա:

Հաղորդագրություններ(Comments)

Հաղորդագրությունները կոդում գրվում են ծրագրավորողների համար՝ բացատրելու, թե ինչ է կատարվում և ինչու: Դրանք հատկապես կարևոր են, երբ աշխատում ես թիմում, փոխանցում ես նախագիծը ուրիշին կամ վերադառնում ես կոդին երկար ժամանակ անց: Դրանք օգնում են հասկանալու մտածելակերպը, որոշումների հիմքը և կանխում են սխալ մեկնաբանությունները:

TypeScript-ում comment ստեղծելու երկու ձև կա.

- ➢ // — single-line comment, որը գրում ես մի տողի մեջ:

- /* ... */ — multi-line comment, որը նախատեսված է ավելի երկար բացատրությունների համար:

Տվյալների տեսակները (Data Types)

Ծրագրավորման հիմնարար և ամենակարևոր գաղափարներից մեկն այն է, որ յուրաքանչյուր արժեք ունի իր հստակ սահմանված տեսակը, այսինքն՝ տիպը: Տվյալների տիպերը որոշում են, թե տվյալ արժեքը ինչ բնույթ ունի՝ ամբողջ թիվ է, տեքստ, ցուցակ, թե որևէ այլ բան: Սրանով պայմանավորված՝ համակարգը կարողանում է հասկանալ, թե ինչպես վարվել տվյալ արժեքի հետ, ինչպես այն պահել հիշողության մեջ, ինչպես վերամշակել այն, և ինչպիսի գործողություններ կարելի է կամ չի կարելի կատարել այդ արժեքի վրա:

Ի տարբերություն JavaScript լեզվի, որտեղ տվյալների տիպերի ստուգումը հիմնականում կատարվում է միայն կատարման պահին (runtime), TypeScript-ը տրամադրում է խիստ, կառուցվածքային և կանխատեսելի տիպային համակարգ: Սա նշանակում է, որ TypeScript-ը ծրագրավորողին հնարավորություն է տալիս արդեն ծրագրի գրման փուլում (compile time) ստուգել՝ արդյոք արժեքները համապատասխանո՞ւմ են իրենց սահմանված տիպերին: Եթե ծրագիրը պարունակում է որևէ տիպային անհամապատասխանություն՝ օրինակ, փորձ է արվում տեքստային տիպով արժեք վերագրել փոփոխականի, որը նախատեսված է միայն թվային արժեքների համար, ապա TypeScript-ը դա կբացահայտի և կմատնանշի որպես սխալ:

Տեսակի նշանակությունը

Երբ մտածում ենք փոփոխականի մասին, կարելի է պատկերացնել այն որպես փոքրիկ տուփ՝ համակարգի հիշողության մեջ: Այդ տուփի վրա ամրացված է պիտակ, որն ասում է, թե այդ տուփում ինչ տեսակի արժեք կարող ենք պահել: Եթե տուփի վրա գրված է "թիվ", ապա այնտեղ կարող ենք դնել միայն թվային տվյալներ: Եթե փորձենք այնտեղ տեղադրել տեքստ՝ օրինակ "Բարև" բառը, TypeScript-ը անմիջապես մեզ կզգուշացնի, որ փորձ ենք անում սխալ տվյալ դնել սխալ տուփի մեջ:

Այսպիսի խիստ տիպային հսկողությունը օգնում է մեզ գրել ավելի կանխատեսելի, կայուն և առանց անսպասելի սխալների ծրագիր: Այն նաև մեծ օգուտ է բերում թիմային աշխատանքի ժամանակ՝ երբ մի քանի ծրագրավորող աշխատում են նույն նախագծի վրա և անհրաժեշտ է, որ բոլորն ունենան հստակ պատկերացում՝ յուրաքանչյուր տվյալ ինչ տիպի է:

Հիմնական տվյալների տեսակներ

TypeScript-ում գոյություն ունեն մի շարք հիմնական (primitive) տվյալների տիպեր: Ստորև կանդրադառնանք դրանցից երկուսին՝ `number` և `string` տիպերին, որոնք ամենից հաճախ օգտագործվողներից են:

Number տեսակը

`Number`-ը այն տիպն է, որը ներկայացնում է բոլոր տեսակի թվերը՝ ամբողջ թվեր (integer), տասնորդականներ (floating), բացասական և դրական արժեքներ: TypeScript-ում բոլոր թվերը դիտարկվում են որպես `number`, և առանձին տիպեր, օրինակ՝ `int` կամ `float`, չեն օգտագործվում՝ ինչպես որոշ այլ լեզուներում:

Օրինակ՝

```
let age: number = 17;
let price: number = 2499.99;
let temperature: number = -5;
```

Այս օրինակում մենք սահմանել ենք երեք փոփոխական՝ բոլորն էլ `number` տիպով: Եթե փորձենք դրանցից մեկին վերագրել տեքստային արժեք, TypeScript-ը սխալ կցուցադրի.

```
age = "տասնյոթ"; // Սխալ. սպասվում է թիվ, բայց տրված է տեքստ
```

String տեսակը

String-ը ներկայացնում է տեքստային տվյալներ: Այս տիպով փոփոխականները պահում են նիշերի շարաններ (character sequences), որոնք կարող են պարունակել բառեր, նախադասություններ, տառեր կամ ցանկացած այլ տեքստային բովանդակություն:

Տեքստերը սահմանվում են ', ", կամ ` (backtick) նշանների մեջ: Backtick-ով գրվածները կոչվում են template literals և հնարավորություն են տալիս ինտերպոլացնել փոփոխականներ տեքստում:

Օրինակ՝

```
let name: string = "Անի";
let greeting: string = 'Բարև աշխարհ';
let info: string = `Իմ անունն է ${name}`;
```

Այս օրինակում մենք օգտագործել ենք տարբեր եղանակներով string-ներ ստեղծելու մեթոդներ: `info` փոփոխականը ցույց է տալիս, թե ինչպես կարող ենք ներառել ուրիշ փոփոխականների արժեքները միացման միջոցով (interpolation):

Եթե փորձենք տեքստային փոփոխականին վերագրել թիվ, կրկին TypeScript-ը կզգուշացնի.

```
name = 123; // Սխալ. սպասվում է տեքստային արժեք, բայց տրված է թիվ
```

Այսպիսով, տվյալների տիպերը TypeScript-ի մեջ ոչ միայն կարգավորում են ծրագրի կառուցվածքը, այլ նաև օգնում են խուսափել բարդ սխալներից՝ ծրագրի զարգացումն ավելի հուսալի և վստահելի դարձնելով: Հետևելով տիպային համակարգի կանոններին՝ մենք ստանում ենք ավելի կարդալի, պահպանելի և տեխնիկապես ճշգրիտ կոդ:

Հաջորդ գլուխներում մենք կծանոթանանք նաև մյուս հիմնական տիպերին, կոմպլեքս տիպերին, և TypeScript-ի առաջադեմ տիպային առանձնահատկություններին:

Պայմանական օպերատորներ

Երբ մարդը որոշում է կայացնում, նա մտածում է պայմանների մասին: Եթե հագուստը մաքուր է, հագնում է այն: Եթե եղանակը լավ է, կարող է դուրս գալ զբոսնելու: Եթե ժամը ուշ է, գուցե գնա քնելու: Այսօր՝ համակարգիչը նույնպես որոշումներ է կայացնում հենց այս տրամաբանությամբ:

Ծրագրավորման մեջ այսպիսի պայմաններ գրելու համար մենք օգտագործում ենք պայմանական օպերատորներ:

Ինչ է պայմանը

Պայմանը արտահայտություն է, որը ստուգում է մի բան՝ ճիշտ է, թե ոչ: Եթե ճիշտ է (այսինքն՝ `true`), համակարգիչը կատարում է որոշ գործողություն: Եթե սխալ է (`false`), այն բաց է թողնում այդ հատվածը կամ կատարում այլ բան:

Պատկերացրու, դու ծրագրում ես ռոբոտ, որը պետք է որոշի՝ կարելի՞ է դուրս գալ բակ: Պայմանը կարող է լինել՝ «Եթե արևոտ է, դուրս արի»: Ահա սա է տրամաբանությունը:

`If` – եթե

Ծրագրում «եթե» գրելու համար օգտագործում ենք `if` բառը:

```
if (պայման) {
  // այս կոդը կկատարվի, եթե պայմանը ճիշտ է
}
```

Օրինակ առօրյա կյանքից.

```
let weather = "արևոտ";

if (weather === "արևոտ") {
  alert("Վերցրու ակնոցն ու դուրս արի զբոսնելու:");
}
```

```
// Համեմատում ենք weather փոփոխականը "արևոտ" բառի հետ, եթե պայմանը ճիշտ է ապա ծրագիրը կտպի 'Վերցրու ակնոցն ու դուրս արի զբոսնելու:' եթե պայմանը ճիշտ չլինի ապա ծրագիրը ոչինչ չի անի:
```

Եթե եղանակը իսկապես "արևոտ" է, համակարգը ցույց կտա հաղորդագրությունը: Եթե եղանակը մռայլ է՝ ոչինչ չի պատահի:

`If ... else` – եթե ... ապա այլապես

Երբ ուզում ենք երկու տարբեր իրավիճակներ նկարագրել՝ ճիշտ և սխալ դեպքում, ավելացնում ենք `else`՝ որը նշանակում է «այլապես»:

```
let isHungry = true;

if (isHungry) {
  alert("Ժամանակն է ուտելու:");
} else {
  alert("Դեռ կսպասենք:");
}
```

Այս օրինակում ծրագիրը ստուգում է՝ սովա՞ծ է օգտատերը: Եթե այո՝ առաջարկում է ու

`If ... else if ... else` – մեկից ավելի պայման

Երբ ունենք ոչ միայն երկու, այլ մի քանի հնարավոր իրավիճակ, կարող ենք ստուգել դրանք հերթով՝ օգտագործելով `else if`:

```
let temperature = 30;

if (temperature > 35) {
  alert("Շատ տաք է:");
} else if (temperature >= 20) {
  alert("Լավ եղանակ է:");
} else {
  alert("Սրսում ենք:");
}
```

Սա նման է մեր առօրյայում կայացվող որոշումներին. եթե շոգ է՝ ցրվում ենք, եթե լավ է՝ դուրս ենք գալիս, եթե ցուրտ է՝ տուն ենք մնում:

Եռակի օպերատոր (Template literals ? :)

Երբ մեր ընտրությունը շատ պարզ է՝ երկու արժեքից մեկն ընտրել, կարող ենք գրել դա մեկ տողով:

```
let age = 17;
let message = age >= 18 ? "Դուք չափահաս եք:" : "Դուք դեռ անչափահաս եք:";
```

Այստեղ մենք ասում ենք. եթե տարիքը մեծ է կամ հավասար 18, տեքստը կլինի առաջին տարբերակը: Հակառակ դեպքում՝ երկրորդը:

Սա նույնն է, ինչ գրել `if...else`, ուղղակի ավելի կարճ և օգտագործվում է այն ժամանակ, երբ մենք ուզում ենք որոշում վերադարձնել որպես արժեք:

`Switch` – `Case`

Երբ ունենք մի փոփոխական, որն ունի մի քանի հնարավոր արժեք, և մենք ուզում ենք յուրաքանչյուրի դեպքում տարբեր բան անել, կարելի է օգտագործել `switch` կառուցվածքը: Սա փոխարինում է շատ `if...else if`-երին, երբ մենք միայն համեմատում ենք նույն արժեքը:

```
let day = "ուրբաթ";

switch (day) {
  case "երկուշաբթի":
    alert("Շաբաթվա սկիզբն է:");
    break;
  case "ուրբաթ":
    alert("Աշխատանքային շաբաթն ավարտվում է:");
    break;
  case "շաբաթ":
  case "կիրակի":
    alert("Հանգստյան օրեր:");
    break;
  default:
    alert("Չճանաչված օր:");
}
```

Այս կառուցվածքը նման է դպրոցական օրակարգային ռեժիմի. եթե օրն է երկուշաբթի՝ երգում ենք այս երգը, եթե ուրբաթ՝ պատրաստվում ենք հանգստին, եթե հանգստյան օր է՝ խաղում ենք: Իսկ եթե օրը մեզ անծանոթ է՝ զգուշացնում ենք:

Այս ամենը միասին օգնում է մեզ ծրագրում որոշումներ կայացնել՝ ինչպես մենք ենք անում առօրյայում: Հաջորդում արդեն կտեսնենք՝ ինչպես են այս պայմանները գնահատվում `true` կամ `false` արժեքով, այսինքն՝ կխոսենք Boolean տիպի մասին:

Ինչ է Boolean-ը

Boolean տիպը պահում է ընդամենը երկու արժեքից մեկը՝

- `true` – ճիշտ է
- `false` – սխալ է

TypeScript-ում երբ սահմանում ես փոփոխական, կարող ես հատուկ նշել, որ այն բուլյան է.

```
let isSunny: boolean = true;
let isNight: boolean = false;
```

Բուլյան արժեքները հատկապես կարևոր են պայմանական օպերատորների հետ աշխատելիս, քանի որ հենց այդ արժեքներն են որոշում՝ կաշխատի՞ պայմանը, թե ոչ:

```
if (isSunny) {
  alert("Վերցրու ակնոցդ ու դուրս արի:");
}
```

Եթե `isSunny` փոփոխականը ունի `true` արժեք, ապա հաղորդագրությունը կցուցադրվի: Եթե այն լինի `false`, ծրագիրը այդ հատվածը պարզապես կանցնի:

Ինչպե՞ս են ստացվում Boolean արժեքներ

Բուլյան արժեքները մենք կարող ենք անմիջապես գրել (օրինակ՝ `true`), բայց իրական ծրագրերում դրանք հաճախ ստացվում են համեմատություններից:

```
let age = 20;
let isAdult = age >= 18; // true
```

Այստեղ `age >= 18` արտահայտությունը վերադարձնում է բուլյան արժեք՝ արդյոք դա ճիշտ է, թե ոչ: Եթե `age` մեծ է կամ հավասար 18, ապա ստացվում է `true`, հակառակ դեպքում՝ `false`:

Այսպիսով, ցանկացած նման համեմատություն՝

- `>` (մեծ է)
- `<` (փոքր է)
- `>=` (մեծ կամ հավասար է)
- `<=` (փոքր կամ հավասար է)
- `===` (հավասար է արժեքով և տիպով)
- `!==` (հակառակ՝ հավասար չէ)

վերադարձնում է հենց Boolean արժեք:

Օրինակ առօրյա կյանքից

Պատկերացրու, որ դու ստեղծում ես խելացի տնային համակարգ, որը պետք է որոշի՝ միացնել լույսերը:
Դու գրում ես հետևյալ տրամաբանությունը՝

Եթե լույս չկա և մարդ կա սենյակում, լույսերը պետք է միանան:

Սա կարելի է գրել այսպես.

```
let isDark = true;
let isSomeoneInRoom = true;

let shouldTurnOnLights = isDark && isSomeoneInRoom; // true
```

Երբ ծրագրի մեջ մենք ունենք երկու կամ ավելի պայման, կարող ենք դրանք միավորել՝ օգտագործելով տրամաբանական օպերատորներ: Դրանք սովորաբար կիրառվում են բուլյան արժեքների հետ:

Տրամաբանական օպերատորներ

TypeScript-ում գոյություն ունեն երեք հիմնական տրամաբանական օպերատորներ՝

- && – «և»
  Վերադարձնում է `true` միայն այն դեպքում, երբ երկու կողմերն էլ `true` են:
- || – «կամ»
  Վերադարձնում է `true`, եթե գոնե մեկը `true` է:
- ! – «ոչ»
  Փոխում է արժեքը՝ `true` → `false`, `false` → `true`

Օրինակ՝

```
let isLoggedIn = true;
let isAdmin = false;

let canAccessSettings = isLoggedIn && isAdmin; // false
```

Այս տողը նշանակում է՝ օգտվողը կարող է մուտք գործել կարգավորումներ միայն այն դեպքում, եթե միաժամանակ մուտք է գործել և ադմինիստրատոր է:

Երբ այլ տիպեր վերածվում են Boolean-ի

TypeScript-ը (և JavaScript-ը) թույլ է տալիս որ որոշ արժեքներ ավտոմատ վերածվեն բուլյանի, երբ օգտագործվում են `if`-ի կամ տրամաբանական օպերատորի մեջ:

Ճշմարիտ համարվող արժեքներ (`true`)

- Ցանկացած չդատարկ տեքստ՝ `"hello"`
- Ցանկացած թիվ բացի 0-ից՝ `5`, `-3`
- Ցանկացած ոչ դատարկ array կամ object

Սխալ համարվող արժեքներ (`false`)

- `0`
- `""` (դատարկ տեքստ)
- `null`
- `undefined`
- `NaN`
- `false` (ինքն իրեն)

```
if ("hello") {
  console.log("Այս տողը կաշխատի, որովհետև 'hello' համարվում է
true");
}
```

Այս գլուխում մենք սովորեցինք, որ Boolean արժեքները հիմնարար դեր ունեն ծրագրի ընթացքը կառավարելու մեջ: Դրանք նման են լույսի անջատիչի՝ կա՛մ միացված են, կա՛մ անջատված: Ու հենց դրանց միջոցով է համակարգիչը որոշում՝ որ ուղղությամբ գնալ:

Ցիկլեր

Ծրագրավորման մեջ շատ հաճախ անհրաժեշտ է միևնույն գործողությունը կրկնել մի քանի անգամ: Այդ գործողությունները կարող են նույնական լինել, բայց տվյալները՝ տարբեր: Օրինակ՝ պատկերացրու, որ պետք է ցուցադրել բոլոր ուսանողների անունները կամ հաշվել բոլոր ամիսների միջին ջերմաստիճանը: Եթե մենք փորձենք այդ ամենը անել առանձին տողերով, ծրագիրը կդառնա երկար, միապաղաղ և խոցելի սխալների համար:

Բարեբախտաբար, ծրագրավորման լեզուները տալիս են հատուկ գործիք՝ **ցիկլեր**, որոնք թույլ են տալիս կոդը կրկնել ավտոմատ ձևով՝ առանց մեկ առ մեկ գրելու:

Ի՞նչ է ցիկլը

Ցիկլը ծրագրին տալիս է հրահանգ՝ «Մինչև այս պայմանը ճիշտ է, կրկնի այս գործողությունը»

Սա նման է այն բանին, երբ ասում ես. "Ամեն օր, քանի դեռ չի անցել շաբաթը, ես գնալու եմ մարզասրահ:" Ահա դա հենց ցիկլային մտածողություն է:

TypeScript-ում կան մի քանի տեսակի ցիկլեր: Այս գլխում կծանոթանանք երեք հիմնական տեսակներին՝

- `while`
- `do...while`
- `for`

While ցիկլ

Այս ցիկլն աշխատում է այնքան ժամանակ, քանի դեռ պայմանը ճիշտ է:

Կառուցվածք՝

```
while (պայման) {
  // այս կոդը կկատարվի, քանի դեռ պայմանը true է
}
```

Օրինակ՝

Պատկերացրու, դու ունես 5 բամպեր գնդակ, և ամեն անգամ ուզում ես մեկ հատ գցել տուփի մեջ, մինչև բոլորը չվերջանան:

```
let balls = 5;
while (balls > 0) {
  console.log("Մի գնդակ տուփի մեջ");
  balls = balls - 1;
}
```

Այս ծրագիրը կգրի 5 անգամ հաղորդագրությունը: Յուրաքանչյուր կրկնությունից հետո մեկ գնդակ պակասում է: Երբ `balls` դառնում է 0, ցիկլը կանգ է առնում:

`Do...while` ցիկլ

Այս կառուցվածքը շատ նման է `while`-ին, սակայն տարբերությունն այն է, որ այն գոնե մեկ անգամ միշտ կաշխատի, նույնիսկ եթե պայմանը սխալ է:

```
let attempt = 1;
do {
```

```
  console.log("Փորձ՝", attempt);
  attempt++;
} while (attempt <= 3);
```

Սա կկատարի երեք փորձ, քանի որ պայմանը մինչև 3 է: Բայց եթե even if attempt սկզբում լիներ 5, առաջին փորձը կկատարվեր, և հետո նոր պայմանը կստուգվեր:

For ցիկլ

Այս ցիկլը առավել հարմար է այն դեպքերում, երբ մենք գիտենք, թե քանի անգամ պետք է կրկնել գործողությունը: Այն իր մեջ ներառում է՝

- սկզբնական արժեք
- պայման
- քայլ (ինչքանով աճի կամ պակասի փոփոխականը)

Կառուցվածք՝

```
for (սկիզբ; պայման; քայլ) {
  // կոդ
}
```

Օրինակ՝

Տպել թվերը 1-ից 5:

```
for (let i = 1; i <= 5; i++) {
  console.log("Թիվ", i);
}
```

Այստեղ՝

- `i = 1` նշանակում է՝ սկսում ենք 1-ից
- `i <= 5` պայմանն ասում է՝ ցիկլը աշխատի մինչև i-ն <= 5 է
- `i++` նշանակում է՝ ամեն անգամ i-ին ավելացրու 1

Այս օրինակն ամբողջովին նույն արդյունքն է տալիս, ինչ `while` ցիկլը, բայց գրառման ձևը ավելի կոկիկ է, երբ մենք աշխատում ենք որոշակի քանակությամբ կրկնությունների հետ:

Ցիկլը կյանքում

Ցիկլերը պարզապես մեքենայական կրկնություն չեն: Դրանք թույլ են տալիս ծրագրերին արձագանքել տվյալների հավաքածուներին՝ օրինակ՝ օգտվողների ցանկերին, ապրանքների ցուցակներին կամ խաղի ընթացքի փուլերին:

Օրինակ՝

> «Մինչև չընթերցեմ գրքի բոլոր գլուխները, չեմ հանգստանա» – սա մարդու ուղեղի ցիկլ է:

Ծրագրավորման մեջ դու գրում ես՝

```
let chapter = 1;
let totalChapters = 10;
while (chapter <= totalChapters) {
  console.log(chapter);
  chapter++;
}
```

Այսպիսի մտածողությամբ կարելի է ծրագրին պատվիրել՝
«մինչև պայմանը ճիշտ է՝ աշխատիր», և երբ այլևս պայմանը սխալ է, կանգ առ:

Ցիկլերը ծրագրին տալիս են կրկնողության ուժ: Հաջորդ գլուխներում մենք կտեսնենք, թե ինչպես են դրանք համատեղվում զանգվածների և գործառույթների (functions) հետ:

Զանգվածներ (Arrays)

Երբ աշխատում ենք միայն մեկ արժեքով, ծրագրավորումն հեշտ է: Բայց իրական ծրագրերում մենք հազվադեպ ենք բավարարվում մեկ տարրով: Պատկերացրու, դու ունես ոչ թե մեկ ընկեր, այլ տասը: Կամ՝ պետք է պահես ոչ թե մեկ թիվ, այլ քննական մի ամբողջ արդյունքների շարք:

